**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, գ. Սարահարթ, Հեռ. (094)077616 ,

<<15>> 10 . 2015թ.

Հ.Հ. Լոռու մարզպետի
պարոն Ա. Նալբանդյանին.

Ձեզ եմ ներկայացնում Սարահարթ համայնքի ղեկավարի 24-27 որոշումները [illegible] 4 էջ.

/ Ղեկավար՝ / [signature] / Հ. Գրիգորյան /

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Եկ. N ________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, գ. Սարահարթ, Հեռ. (094)077616 ,

09 . հոկտեմբերի. 2015թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 24

ՍԱՐԱՀԱՐԹԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՐՏՍԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 11.09.2006 թվականի 15 հրամանի պահանջներով 06. 11.2015 թվականի ժամը 12⁰⁰-ին անցկացնել Սարահարթի գյուղական համայնքի գյուղապետարանի համայնքային ծառայողների հերթական ատեստավորումը:

1.Կասեմյան Գնել Վարազդատի առաջատար մասնագետ-հաշվապահ (3.1-1)

2. Խումարյան Վալերիկ Սմբատի առաջատար մասնագետ (3.1-2)

3. Համբարյան Հայկազ Տաճատի 2-րդ կարգի մասնագետ (3.3-1)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՍԻԼ ՓԻԼՈՅԱՆ

Կատ. '

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, գ. Սարահարթ, Հեռ. (094)077616 ,

09 . հոկտեմբերի. 2015թ.

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 25

### ՍԱՐԱՀԱՐԹԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՐՏՍԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԼԻԱԶՈՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ :

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 29.08.2006 թվականի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի օրինակելի աշխատակարգը հաստատելու մասին թիվ 12Ն հրամանի առաջին գլխի 2-րդ կետով <<հավելված 2>> Սարահարթի գյուղական համայնքի գյուղապետարանի համայնքային ծառայողների ատեստավորման աշխատանքները կազմակերպելու համար լիազոր անձ նշանակել Սարահարթի գյուղական համայնքի գյուղապետարանի գործավար՝ Տաթևիկ Պողոսյանին :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՍԻԼ ՓԻԼՈՅԱՆ

Կաթ. '

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք,
գ. Սարահարթ , հեռ. 094077616

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

,,14'' հոկտեմբերի 2015 թվականի N 26-Ա

## ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով`

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2015թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի անցկացման համար Լոռու մարզի Սարահարթ համայնքում տեղամասային կենտրոն սահմանել Սարահարթի միջնակարգ դպրոցի շենքը /հասցե` 6-րդ փողոց, 213 /:
2. Սույն որոշման մասին տեղեկացնել Լոռու մարզպետին, հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովին, լիազոր մարմնին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Վ.ՓԻԼՈՅԱՆ

2015 թ. հոկտեմբերի 14

գ. Սարահարթ

:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի**
**Սարահարթ համայնք,**
**հեռ.094077616**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14 » հոկտեմբերի 2015 թվականի N 27- Ա

## ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությունով, «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 8-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի քարոզչական պաստառները փակցնելու համար Սարահարթ համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Բնակելի տուն/Մարկոսյան Սասուն/ -1-ին փողոց, տուն 29, մակերես՝5,0
2) Ա/Զ Քերոբյան Մխիթար – 10-րդ փողոց , 1-ին նրբ, շենք 1,մակերեսը՝ 10,0

Սույն որոշումը ներկայացնել Լոռու մարզպետարան:

**ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.Փիլոյան**

2015 թ. հոկտեմբերի 14